

ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

Հենրիետա Հովհաննիսյան

Միքայել Նալբանդյանը պատկանում է հայ գրականության ու մշակույթի այն մեծերի թվին, որոնք Պարոյր Սևակի բառերով ասած՝

Ուշ-ուշ են գալիս, բայց ոչ ուշացած,
Ծնվում են նրանք ճիշտ ժամանակին
Եվ ժամանակից առաջ են ընկնում,
Դրա համար էլ չեն ներում նրանց:

Նալբանդյանի բազմաժանր գրող է. նա հանդես է եկել որպես բանաստեղծ ու արձակագիր, լեզվաբան ու քննադատ, տնտեսագետ ու փիլիսոփա և հրապարակախոս՝ ամենուր դրսևորելով մեծ տաղանդ ու վարպետություն:

Մի առիթով Նալբանդյանն ասել է. «Եղան ժամանակներ, երբ մարդը հարյուր տարի ապրեցավ, բայց մեկ օրվա ճամփա չգնաց, բայց եղան ժամանակներ, երբ մեկ օրում մեկ դար քայլեց»: Այս տողերը առանց չափազանցության և առանց սրբագրելու կարելի է վերագրել հենց իրեն: Այո՛, Նալբանդյանն ապրեց ընդամենը երեսունյոթ տարի և այդ կարճատև կյանքի ընթացքում այնքան շատ բան արեց, որ այն վեր է մեկ մարդու ուժերից ու կարողությունից: Եվ զարմանալին այն է, որ այդ բոլոր բնագավառներում էլ նա զգալի նորություն ու թարմություն բերեց: Այնպես որ Նալբանդյանը ոչ միայն նշանավոր բանաստեղծ է, արձակագիր, լեզվաբան, տնտեսագետ, փիլիսոփա և հրապարակախոս, այլև շատ հմուտ ու բազմահարուստ գիտելիքների տեր գրականագետ:

Հայ գրաքննադատական միտքը, ինչ խոսք, շատ հին պատմություն ունի: Այն նախորդել է եվրոպականին և հաջորդել հունահռոմեականին: Հայ գրաքննադատությունը վաղ շրջանում չի եղել մի առանձին տարրորշված և անջատ բնագավառ: Մեր գրականաքննադատական միտքը արտահայտել է բազում անգամ, բազում ձևերով, անցել է զարգացման հետաքրքրական ճանապարհ, հաճախ հանդես գալով նաև պատմագրական, քերականական և փիլիսոփայական հյուսվածքներում, իսկ միջ-

նադարում՝ նաև չափածո երկերում: Ավելացնենք նաև, որ նույն այդ երկույթը ավելի կամ պակաս չափով բնորոշ էր նաև հին հունական և հռոմեական գրական քննադատությունը: Ասել է, թե հայ քննադատական միտքը (և ոչ միայն հայ) սկզբնական շրջանում և ապա ամբողջ միջնադարում երևան է եկել ոչ ինքնուրույն տեսքով, այլ պատմագրության, ճարտասանության, քերականության, բանաստեղծության և փիլիսոփայության հետ խառը: Նոր շրջանում, հատկապես 18-19-րդ դարերում, որոշվեցին նրա «նեղ» սահմանները, գրական և հասարակական ուրույն անելիքները: Այժմ արդեն քննադատության բնորոշումը ենթարկվում է որոշակի խմբագրության, գրականագիտության այս բաժինը գերազանցապես զբաղվում է տվյալ շրջանի, նույն ժամանակի գեղարվեստական երկերի և գրական երկույթների քննությամբ և գնահատությամբ:

Թեև հայ գրաքննադատության արմատները ձգվում են մինչև դարերի խորքը, բայց պիտի խոստովանել, որ նրա իսկական ծաղկումն ու զարգացումը մեծապես կապում են 19-րդ դարի կեսերի հետ, երբ հանդես եկավ Միքայել Նալբանդյանը: Նրա շնորհիվ ավելի մեծացան գրական քննադատության իսկական դերն ու կշիռը, և այն դարձավ գրականագիտության ինքնուրույն և կարևորագույն ճյուղերից մեկը:

Միքայել Նալբանդյանը իր գրաքննադատական հայացքները արտահայտել է հատկապես «Կրիտիկա «Հանդես նոր հայախոսության», «Կրիտիկա «Սոս և Վարդիթերի», «Մխիթար Սեբաստացին և Մխիթարյանք», «Հռոմաջաբան «Թափառական հրեա»-ի հողվածներում, «Կոմս Էմմանուելի «Հիշատակարանում», «Մեռելահարցուկ» անավարտ վեպի տողատակերի ծանոթագրություններում և այլուր:

«Կրիտիկա «Հանդես նոր հայախոսության» հողվածը, որ գրվել է Ստեփանոս Նազարյանի «Հանդես նոր հայախոսության» առաջին հատորի առիթով, Միքայել Նալբանդյանի անդրանիկ գրաքննադատական ելույթն էր, ուր նա հայ ընթերցողին միանգամից ծանոթացնում էր երկու ծանրակշիռ արժեքների՝ աշխարհաբար լեզվով լույս տեսած կարևոր մի գրքի և բացառիկ մի նոր երկույթի՝ կրիտիկա (քննադատություն) հասկացության հետ:

Այս գրախոսական հողվածում Նալբանդյանն իր «անպատմելի» ուրախությունն է հայտնում, որ հանձին Ստեփանոս Նազարյանի «Հանդես նոր հայախոսության» գրքի, «Ժողովրդական լեզուն ձեռք ու ոտք է ստացել, և մեր նոր մատենագրության աղքատին գանձարանի մեջ երևում է

մտավորական և կենսական շարժողություն»¹: Մեծ գրողին հատկապես գրավում է Նալբանդյանի «Հանդես նոր հայախոսության» գիրքը իր հարուստ բովանդակության համար, բայց նա չի մոռանում մատնացույց անել նաև լեզվի թերությունները և հեղինակի «եվրոպայաբար» մտածելու եղանակը:

Նալբանդյանը հրճվանքով նկատում է, որ այժմ հայ մանուկը Ռուսաստանի մեջ կարող է իր ձեռքը առնել մի գիրք և հոգեպես զվարճանալ, և որ «գեղապատիվ հեղինակը» հասել է իր նպատակին, նրա տարիների «չարչարանքի վաստակը դարձած է հավիտենական գեղեցիկ արձան, որով պիտո է անմահանա նորա միշտ գեղեցիկ անունը»²: Նալբանդյանին հատկապես դուր է գալիս այդ աշխատության լեզուն, որը ավելի ճոխ է, ավելի հարուստ և մոտ կենդանի ժողովրդի բարբառին, քան նույն հեղինակի մյուս երկերը՝ «Առաջին հոգեղեն կերակուրը հայոց երեխաների համար» և «Վարդապետարանը կրոնի»: Նալբանդյանը հավատացած է, որ «ազգը սիրով կընդունեն այսպիսի մի գիրք, որ ընծայել է հեղինակը յուր ազգի զավակների դաստիարակությանը, որ և պիտո է շատ ձեռնտու լինել դրա»³: Մեծ գրողը միաժամանակ խոստանում է «Հյուսիսափայլի» առաջիկա համարներից մեկում «խոսել այս պատվական աշխատության երկրորդ ավելի ճոխ հատորի վերա, որ այս օրերումը դուրս է եկած տպագրական մամուլի տակից»:

Դժբախտաբար, Նալբանդյանը ինչ-ինչ պատճառով իր այս խոստումը չի կատարում: Հետաքրքիր է, որ Նալբանդյանն այս հոդվածում ընթերցողներին ծանոթացնում է քննադատության խնդիրների նշանակության, գրականության զարգացման գործում դրա ունեցած անփոխարինելի դերի և, վերջապես, քննադատության ժանր ու պատասխանատու պարտականությունների հետ: Նա գտնում է, որ ժողովրդի մեջ տարածված է այն սխալ կարծիքը, թե «կրիտիկան վատ բան է, թե նա մարդ է խայտառակում, թե նա հեղինակի պակասությունները երեսին զարկելով ծիծաղում է նորա վրա և ցույց տալիս հասարակությանը մի այսպիսի հեղինակի տգիտությունը որևիցե բանի մեջ»³: Այս սխալ լուրերը ժողովրդի

¹ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու (վեց հատորով), հ 2, Երևան, 1980, էջ 182:

² Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու (վեց հատորով), հ 2, էջ 181:

³ Նույն տեղում, էջ 174:

մեջ տարածում են սուտ ու ժողովրդից կտրված սխուլաստիկ գիտնականները և Նալբանդյանը ձգտում է պարզություն մտցնել այդ հարցի մեկնաբանության մեջ, և հենց սկզբից քննադատությունը դնել գիտական հիմքի վրա:

Նալբանդյանը իրավացիորեն գտնում է, որ կրիտիկան առհասարակ բարձր զարգացման հասած ժողովրդին միայն կարող է հատուկ լինել, բայց նրա հիմքը գրականությունն է, և նրա դերը այդ գրականության ոգու բացահայտումն է: «Այն ազգը, որ չունի կրիտիկա,- գրում է Նալբանդյանը,- չունի և մատենագրություն. մատենագրությունն առանց կրիտիկայի, միևնույնն է, ինչպես մարմինն առանց հոգու, իսկ այն ազգը, որ չունի մատենագրություն, ասել է թե չունի և բանականություն, որովհետև մատենագրությունը այլ բան չէ, եթե ո՛չ բանականության արձանագրություն»¹:

Նալբանդյանը ցավում է, որ մեզանում այդ չեն հասկանում, և քննադատությունը ոմանք շփոթում են բամբասանքի և նախատինքի հետ, և մատնացույց է անում լուսավորված ազգերին, որոնց մեջ քննադատությունն այնքան ծաղկած է, որ դարձել է գրականության մի մեծ և օգտակար ճյուղ:

Ահա այսպիսի սկզբունքներով էր ղեկավարվում Նալբանդյանը յուրաքանչյուր գիրք քննադատելիս: Նա ուշի ուշով հետևում էր ժամանակակից հայ գրականությանը և նոր լույս տեսած գրքերի մասին հայտնում իր օբյեկտիվ ու խիստ անաչառ կարծիքը: Միքայել Նալբանդյանը գրականագիտական բազմաթիվ հարցեր է արծարծել 1858-1860 թվականներին «Հյուսիսափայլ» ամսագրի տարբեր համարներում «Կոմս Էմմանուել» կեղծանվամբ տպագրվող «Հիշատակարանում»: Հիրավի երեք տարի շարունակ «Հյուսիսափայլում» տպագրվող «Հիշատակարանը» Նալբանդյանի ամենահարուստ ստեղծագործությունն է, որը աչքի է ընկնում բարձրացված հարցերի բազմազանությամբ ու հարստությամբ: Այստեղ հեղինակը փորձել է տալ հայկական կյանքի համայնապատկերը: Այն ասես հայկական կյանքի կենդանի հանրագիտարանը լինի: Ամբողջ հայ կյանքը կինոէկրանի պես գալիս անցնում է ընթերցողի աչքերի առջև: Ինքը՝ Նալբանդյանը, հանդես է գալիս մերթ իբրև հրապարակախոս ու պատմաբան, մերթ արձակագիր ու բանաստեղծ, մերթ

¹ Նույն տեղում, էջ 177:

իբրև մանկավարժ ու փիլիսոփա, մերթ գրականագետ ու հուշագրող: Եվ բոլոր բնագավառներում էլ մեծ գրողի ջանքերը պսակվել են փայլուն հաջողությամբ:

«Հիշատակարանում» Նալբանդյանը խստորեն քննադատում է Թիֆլիսի «Մեղու Հայաստանի» թերթի ու նրա հրապարակախոս Մովսես Իսահակյանի այն թյուր կարծիքը, ըստ որի իբր ազգության թերությունները մատնանշելն ու նրանց պախարակելը մեծագույն հանցանք է: Այստեղ կան բազմաթիվ թղթակցություններ, որոնք երբեմն ավարտուն հոդվածների տպավորություն են թողնում և նվիրված են մեր գրողներին, գրականության ու մշակույթի ամենատարբեր հարցերին:

«Հիշատակարանում» Նալբանդյանը շատ ջերմ է արտահայտվում սիրված բանաստեղծ, մեծ հայագետ Ղևոնդ Ալիշանի մասին, որին նա հանդիպել է Փարիզում եղած ժամանակ, երբ այցելել է Մուրադյան վարժարանը, որի տեսուչն էր Ալիշանը: «Այս արժանապատիվ անձը ծանոթ է հայոց ազգին մանավանդ Նահապետի անունով,- գրում է Նալբանդյանը: -Նորա Ավագ և Փոքր Մասիս, Հայոց աշխարհիկ, Պլպուլն Ավարայրի տաղերգությունքը ջերմացուցել են շատ սրտեր Նահապետի անունի վերա: Հայր Ղևոնդ Ալիշանցը յուր անունով և Նահապետ ստորագրությամբ հրապարակած կամ մինչև այժմ դեռևս չտպված տաղերգությունքը տպել է առանձին, որպես Նվագք, Հայրունի մակագրով»:

Նալբանդյանը նկատում է, որ հին գրածների մեջ Ալիշանը գործ դրել ամեն ճիգ ու ջանք՝ օգտագործելով խրթին ոճ,իսկ Նահապետ անունով գործերը թեև աշխարհաբար, «բայց շատ հաղթահարված էին հին լեզվից»: Նալբանդյանն ընդունում է Ալիշանի բանաստեղծական մեծ տաղանդը: «Հայր Ղևոնդ Ալիշանցը ունի բանաստեղծական քանքար և այդ քանքարը կարող էր ավելի պարզ և վառ երևալ, -ասում է նա,- եթե արեղայական սևաթույր վերարկուն չլիներ խափանառիթ»: Մի խոսքով՝ այս քանքարավոր մարդու հետ տեղի էր ունենում նույնը, ինչ Աբովյանի հետ. հին լեզուն, այսինքն՝ գրաբարը, խռովում էր նրա միտքն ու հոգին: Նալբանդյանը մինչև անգամ հորդորում է բանաստեղծին՝ գրել ժողովրդին հասկանալի աշխարհաբար լեզվով: Ինչպես հայտնի է, Նալբանդյանը Ղևոնդ Ալիշանին հիշել և ջերմ տողեր է նվիրել նաև «Կրիտիկա Պերճ

¹ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու (վեց հատորով), հ. 3, Երևան, 1983, էջ 155-156:

Պռոշյանի «Սոս և Վարդիթեր» վեպի մեծարժեք ուսումնասիրության մեջ:

Հիշենք, որ Նալբանդյանը դրական կարծիք է ունեցել Սմբատ Շահագիզի «Լևոնի վիշտը» պոեմի մասին: Պահպանվել է բանաստեղծ Ալեքսանդր Ծատուրյանի վկայությունը (հավանաբար նա էլ ուրիշներից է լսել), ըստ որի բանտում Նալբանդյանը կարդալով «Լևոնի վիշտը» պոեմը, բացականչել է. «Լևոնի վիշտը իմ վիշտն է»:

Հիշատակության արժանի են Փարիզից գրած թղթակցությունները, ուր Նալբանդյանը դրվատում է Ճանիկ Արամյանի արդյունավետ աշխատանքը հայ տպագրական գործի ասպարեզում, հարգանքի խոսք ասում Կարապետ Շահնազարյանի հասցեին, որը հայ հին հեղինակների երկերը հրատարակում է «Շատ հայ մատենագրաց» ընդհանուր խորագրով:

«Արգո վարպետը,- գրում է Միքայել Նալբանդյան-Կոմս Էմմանուելը, -ծեռք է զարկած, մինչև այժմ չտպված հայոց հին հեղինակների գործերը յուր ծանոթաբանությամբ և մեկնաբանությամբ տպելու... Լսում ենք, թե տասն և չորս հատոր պիտի լինի բոլոր հրատարակությունը»:

Ապա ջերմ խոսքերով ողջունում է Ստեփան Ոսկանյանի «Արևմուտք» պարբերականի ծնունդը և անարգանքի սյունին գամում այն «սևահոգի անպիտանին», որի պատճառով խափանվել է «Արևելքը»:

«Արևմուտքի ազնիվ հրապարակողը և հիմնադիրը թող հաճին ընդունել մեր առ ի սրտե հրապարակական շնորհակալությունը, որոնց ցանկանում ենք նույնպես ամենայն հաջողություն և հառաջադիմություն», - գրում է Միքայել Նալբանդյանը:

50-ական թվականներին լույս տեսած աշուղների տաղերի մասին Նալբանդյանն աննպաստ կարծիք է հայտնել՝ առաջացնելով որոշ տարակուսանք: Բանն այն է, որ նա գրել է. «Նորերումս դուրս եկան ազգային երգերի անունով մի քանի անալի ոտանավորք՝ Սայաթ-Նովա, Ադամ Ազբար, Շիրին և այլն»:

Քննադատը չէր հավանում մանավանդ նրանց լեզուն, որ մի խառնուրդ է թուրք, թաթար և այլ օտար բառերի: Նալբանդյանի այս կարծիքի մեջ զարմանալին այն է, որ նա Սայաթ-Նովայի երգերը նույնպես խառնում է «անալի» բանաստեղծությունների հետ, մինչդեռ հայտնի է, որ Սայաթ-Նովան հայ ժողովրդի ամենասիրելի բանաստեղծներից է: Հավանաբար այստեղ ինչ-որ թյուրիմացություն է եղել, որովհետև Նալբանդյանը դրանից հետո իր եղբորը՝ Ղազարոսին 1863 թվականի ապրիլի 12-ին ուղղված նամակում գրում է, թե «Սայաթ-Նովան» կարգին գիրք

է»¹: Սակայն Նալբանդյանի գրիչը դառնում է անխնա և կրքոտ այն դեպքում, երբ խոսում է այնպիսի գրքերի մասին, որոնք, նրա կարծիքով, խիստ վնասակար են ազգի ու ժողովրդի համար: Հիշենք, թե ինչպիսի գայրույթով է քննադատում Ալեքսանդր Խուդաբաշևի «Обозрение Армений» գիրքը՝ այն անվանելով «անարգ գրպարտություն» մեր երանելի սուրբ նախահայրերի դեմ: Խոսքը վերաբերում է մեր մեծերին՝ Սահակ Պարթևին, Մովսես Խորենացուն և Ներսես Շնորհալուն: Միքայել Նալբանդյանին հատկապես զայրացրել է այն փաստը, որ Խուդաբաշևը, չգիտես թե ինչ իրավունքով, 5-րդ դարի մեր մեծ պատմիչ Մովսես Խորենացուն անվանում է թեթևամիտ: Նալբանդյանը, քննադատելով Խուդաբաշևին, իրավացիորեն գտնում է, որ այդ «պարոնը կամ ամենևին չէր կարդացել Խորենացին, կամ թե չէ հասկանում նորա գրվածքը»: Նույնպիսի անչառությամբ ու խստությամբ է վերաբերվում Նալբանդյանը նաև թարգմանություններին: Նա իրավացիորեն գտնում է, որ թարգմանելի գրվածքները պետք է ունենան մի «հաստատահիմն արժանավորություն», պիտի հարմար լինեն դրանք ժամանակի պահանջներին, իսկ լեզուն պիտի անպայման հասկանալի լինի:

Այս չափանիշներով մոտենալիս նրան չի բավարարում Խորեն Գալֆայանի (Նար Պեյ) ֆրանսիացի նշանավոր բանաստեղծ Լամարթինի «Դաշնակները» բանաստեղծությունների ժողովածուի թարգմանությունը: Այնքան քրտինքով առաջ եկած գործը Նալբանդյանը համարում է ազգի համար մեռած, որովհետև լեզուն գրաբար է, իսկ բանաստեղծություններից միստիցիզմի հոտ է փչում: Բայց ընդհանուր առմամբ Նալբանդյանը գնահատում է ֆրանսիացի նշանավոր բանաստեղծի տաղանդը և բանաստեղծությունների մի շարք արժանավորությունները: Նա իրավացիորեն գտնում է, որ Լամարթինը ճշմարիտ բանաստեղծ է, որի համար էլ արժանացել է լուսավորյալ աշխարհի ուշադրությանն ու ջերմ համակրանքին: Ավելացնենք նաև, որ Խորեն Գալֆայանին Նալբանդյանը անդրադարձել է նաև իր «Աղցմիք» երգիծական շարքում (1864), ուր տեղ են գտել տասներկու բանաստեղծություններ և «Նախահոր արկածները» պոեմը: Շարքի բանաստեղծությունները պարողիաներ են, այսինքն՝ ծաղրանմանություններ, Խորեն վարպետ Գալֆայանի 1863 թվականին

¹ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու (վեց հատորով), հ. 5, Երևան, 1984, էջ 246:

Թեոդոսիայում տպագրված «Վարդենիք» բանաստեղծությունների ժողովածուն: «Աղցմիքի» ընթերցողներին ուղղված խոսքում Նալբանդյանը հեզնանքով է խոսում «Վարդենիքի» հեղինակի մասին, իսկ պարոդիաներում խստորեն ծաղրում է Խորեն Գալֆայանի գովերգած «իդեալական», «աստվածային», «երկնային», պլատոնական սերը՝ անկիրք սերը:

“Նախահոր արկածները» պոեմում Նալբանդյանը ծաղրում է եկեղեցու կողմից սրբագրված այն քարոզը, ըստ որի Ադամը մեղք գործեց՝ ճանաչելով Եվայի կանացիությունը: Ղազարոս Աղայանը, «Իմ կյանքի գլխավոր դեպքերը» իր հուշերում շատ բարձր գնահատելով պոեմը, նշելով, որ այն մի շատ հրաշալի բանաստեղծություն է, ուր նկարագրվում է բնականի կոիվը անբնականի դեմ. Ադամը վիճում է հրեշտակի հետ, որ թույլ չի տալիս նրան սիրելու Եվային: Հրաշալի էր մանավանդ սիրահարված Ադամի և Եվայի գեղեցկության նկարագիրը:

Քանի որ Խորեն Գալֆայանի «Վարդենիք» ժողովածուն գրաբարով էր, ուստի Նալբանդյանն էլ, ծաղրելով նրան, ամբողջ շարքը գրել է գրաբարով, որով երևի ուզում էր ասել, որ միայն դու չէ, որ կարող ես գրել գրաբար:

Նալբանդյանը միշտ էլ համակրանքով էր վերաբերվում եվրոպական գրողներին, դիմում նրանց օգնությանը և քաղվածքներ բերում Շեքսպիրից, Սերվանտեսից, Ռուսոյից, Բերանտեից, Բայրոնից, Շիլլերից և շատ ուրիշներից: Նույնքան ուշագրավ է Նալբանդյանի ջերմ վերաբերմունքը Ռուսոյի և Վոլտերի հանճարի նկատմամբ, քանի որ հենց դրանք այն «աստվածային քուրաներն են, որոնցից առաջինը դուրս թռան ազատության կայծերը»:

Հիշենք նաև, որ Միքայել Նալբանդյանի գրած վերջին բանաստեղծությունը “Ժան Ժակ Ռուսոյի հիշատակին» նվիրված բանաստեղծությունն է: Հեղինակն այն միտքն է ընդգծում, որ Ժան Ժակ Ռուսոն՝ ֆրանսիացի մեծ գավակը, անմահ է, “Թեև սահի հազար դար» և որ շատ են հալածել նրան տգետ ու խավարամիտ մարդիկ.

Գիտեմ վրադ շատ հաչեցին
Տգիտության շուները,
Քեզ շատ անգամ քարկոծեցին
Կեզձավորաց խումբերը:
Բայց դու մենակ, մարդ քաջարի,

Միշտ անդդորդ, անասան,
Կանգնած նման ապառաժի՝
Ձեռք պարզեցիր մարդկության:

Եվ հայ ժողովրդի մեծ զավակը իր երախտագիտությունն է հայտնում
Ֆրանսիացի անմահ զավակի շիրմաքարին, նրա մահվան 87-րդ տարե-
դարձի առթիվ:

Ծունր եմ դնում ես այդ քարին,
Ութսունյոթը տարուց ետ՝
Քեզ պատվում է հայի որդին,
Եվ նա՛ մարդ է, վարդապետ:

Հետաքրքիր է, որ «Հիշատակարանում» Միքայել Նալբանդյանին զբաղեցրել է նաև հայկական թատրոնի ճակատագիրը: Ահա թե ինչու նա Մոսկվայի «ամենապատվական» նորություններից մեկը համարում է Մոսկվայի համալսարանի ուսանողների ուժերով 1859 թվականի հունվարի 27-ին Միքայել Հարությունյան Ստեփանյանց «մեծարգո պարոնի տանը» կայացած թատերական առաջին ներկայացումը: Ուսանողները ներկայացրել էին Սարգիս Վանանդեցու «Արիստակես» պատմական ողբերգությունը և Նիկողայոս Ալադաթյանի Թիֆլիսի կյանքից վերցրած «Վա՛յ իմ կորած 50 ոսկին» կատակերգությունը: Այս ներկայացմանը, ինչպես վկայում է Նալբանդյանը, մասնակցում էին մոտ 200 այր ու կին, որոնց թվում և ինքը:

Ողբերգության նյութը վերցված էր մեր ժողովրդի անցյալի պատմությունից, իսկ կատակերգությունը՝ ժամանակակից կյանքից: Առաջին գրված էր գրաբար լեզվով, երկրորդը՝ Թիֆլիսի բարբառով:

«Հիշատակարանում», որ տպագրվել է «Հյուսիսափայլ» ամսագրում, Նալբանդյանը շատ խիստ բացասական կարծիք է հայտնում «Արիստակես» ողբերգության մասին: «Առհասարակ շատ թույլ բան և զուրկ ամենայն բանաստեղծական ճարտարութենից. ասես թե դուրա հեղինակը հարկադրանքով գրել է այդ գործը»: Նա ամենայն տեղ, ամենայն բանով զանազան ազգասիրական խոսքերով աշխատում է վարագուրել դրամատիկական գործողության պակասությունը և չքավորությունը: Ի միջի այլոց, Վանանդեցու ողբերգության իսկական վերնագիրը «Սուրբ Ներսես» էր, որ չգիտենք, թե ինչու են ուսանողները դարձրել «Արիստակես»:

Ապա Նալբանդյանը հավանություն է տալիս Ալադաթյանի կատա-

կերգությանը և գտնում է, որ նրա գործը «բավական կենդանություն տվեց հայկական բնավորություններին»: Ալադաթյանի այս կատակերգությունը, փաստորեն հիմք դրվեց հայ կենցաղային դրամատուրգիային: Նալբանդյանը միաժամանակ ցանկություն է հայտնում, որ Թիֆլիսի հայերն էլ «ցանկանային տեսանել յուրյանց մայրենի լեզվով խաղարկություններ, մանավանդ ո՛չ մի տեղ այնպիսի հարմար չէ հայկական թատրոնի համար, որպես Թիֆլիսը»:

Այսպիսով, Նալբանդյանը առիթ է ունենում շնորհավորելու արևելահայ թատրոնի սկզբնավորումը Մոսկվայում, թատերական ներկայացումները գնահատելով իբրև ազգը դաստիարակելու լավագույն միջոց:

Պոլսում եղած ժամանակ Նալբանդյանը հետաքրքրվում է նաև Պոլսի Բերայի «Արևելյան թատրոն»-ով: Պոլսի կատարած նրա այցելությունը զուգադիպում է այդ թատրոնի հիմնադրմանը և Նալբանդյանը ճառ է արտասանում: Այդ ճառը «Ազգային թատրոն Պոլսի մեջ» խորագրով տպագրվում է 1861 թվականի «Մեղու» թերթի թիվ 147-ում:

Նալբանդյանը մեծ ոգևորությամբ ողջունում է ազգային թատրոնի «այդ մեծախորհուրդ գործի» ստեղծումը Արևմտյան Հայաստանում և գոհունակություն հայտնում, որ ազգի բարոյական դաստիարակության ծանրակշիռ այդ գործն իրականացնում է հայ երիտասարդությունը: Նալբանդյանը հերքում է այն տարածված ու սխալ կարծիքը, ըստ որի իբրև թե «թատրոնը մի տեղ է, որ զվարճանալու համար միայն երթում են մարդիկ»: Եվ ապա ավելացնում է, որ «չկա մարդ, որ չկարողանա մի օգուտ քաղել» թատերական այդ ներկայացումներից, այսինքն՝ ընդգծում է թատրոնի դաստիարակչական դերը: Նալբանդյանը ջերմ ու դրվատանքի խոսք է ասում առաջին դերասանուհիների՝ Արուսյակ և Աղավնի Փափազյան քույրերի մասին, որոնք առաջինն են, որ քաջությամբ հաղթահարեցին հասարակական նախապաշարումները և բեմ բարձրացան: Մեծ գրողը հույս է հայտնում, որ թատրոնի տնօրինությունը հատուկ ուշադրություն կդարձնի նախ ներկայացվող թատերգությունների լեզվի մաքրության և ապա՝ ինքնուրույն և թարգմանական դրամատիկական երկերի ընտրության վրա, որովհետև վատ պիեսները կարող են վնասակար լինել մարդկանց համար: Նալբանդյանն իր հոդվածն ավարտում է «կեցցե»-ներով՝

¹ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու (վեց հատորով), հ. 3, էջ 334:

“Կեցցեն բոլոր հայ թատրոնք,
 Կեցցեն և դերասանք,
 Կեցցեն դերասանուհիք,
 Պարկեշտք և ժրաջանք»¹:

Հոդվածի տակ նշված է գրելու տեղը և տարեթիվը՝ “Պերա 17 դեկտեմբեր, 1861»:

Նալբանդյանին շատ է հետաքրքրել հայ հին գրականությունը: Նա հաճախ էր սիրում տալ այսպիսի հռետորական հարց. «Ունե՞նք արդյոք մենք հայերս, մատենագրություն»: Մեծ գրողը շատ բարձր է գնահատում հայ հին գրողներին ու նրանց երկերը՝ Մովսես Խորենացուն, Եզնիկ Կողբացուն, Եղիշեին, Ղազար Փարպեցուն, Գրիգոր Նարեկացուն, Ներսես Շնորհալուն և մյուսներին: Նա գրում է, թե հայերը աշխարհի հնագույն ժողովուրդներից են և նրանց մատենագրությունն ունեցել է մեծ անցյալ: Այժմ էլ լույս են տեսնում շատ գրքեր ամենուր, և, հատկապես, Մխիթարյանների մոտ: Բայց Նալբանդյանը չի վարանում հերքելու այդ գրականության բուն արժեքը: Ահա թե ինչու նա հանգում է տխուր եզրակացության: Նրա կարծիքով հայ գրականությունը արեղայական է, այսինքն՝ կրոնական է, նրանից միջնադարի հոտ է փչում: Նալբանդյանը մեր հին պատմիչներին ու գրողներին առանձին – առանձին շատ բարձր է գնահատում, բայց և այնպես գտնում է, որ հայերը մատենագրություն չունեն: Ինչո՞ւ հարցին Նալբանդյանը տալիս է հետևյալ պատասխանը. նա ասում է, քանի որ գրականությունն արտացոլում է իրական կյանքը, իսկ հայերը չեն ունեցել ապահով ու կայուն քաղաքական կյանք, հետևաբար չեն ունեցել նաև փոքրիշատե բանաստեղծական, այսինքն՝ գեղարվեստական գրականություն: Եղած գրականությունն էլ, քաղաքական անապահով վիճակին համապատասխան, ողբ ու լաց է՝ սկսած Խորենացուց մինչև Շնորհալի: Սա օրինաչափ երևույթ է, բացատրում է Նալբանդյանը. ո՞վ է տեսել, որ մարդը մտնի մեռելատուն և հարսանիքի պարեր պարի, և եթե երկիրն անհանգիստ է ու հուսահատ, այդպիսին է նաև նրա գրականությունը: Սակայն երբեմն կյանք - գրականություն կապին անդրադառնալիս Նալբանդյանն ընկնում է որոշ ծայրահեղությունների մեջ: Այստեղից էլ նրա հոռետեսական կարծիքը մեր հին գրականության մա-

¹ Նույն տեղում, էջ 334:

սին: Բայց այս հակասությունը թվացյալ է: Բանն այն է, որ գնահատումների մեջ Նալբանդյանը կիրառում է ժամանակային տարբեր չափանիշներ. հին գրականությունը լավ է իր ժամանակի համար, բայց այլևս չի բավարարում ներկայի պահանջները: Բացի այդ, հին գրականությունը հիմնականում պատմագրություն է, մինչդեռ ներկա օրերում անհրաժեշտ է ստեղծել գեղարվեստական գրականություն:

Ապա՝ հին գրականության լեզուն մեռած է ու անհասկանալի: Նոր ժամանակների, նոր բովանդակությամբ գրականությունը պետք է գրվի բոլորին հասկանալի աշխարհաբար լեզվով:

Այս բոլոր հատկանիշները նկատի ունենալով՝ Նալբանդյանը ֆրանսիացի գրող Էյեն Սյուի «Թափառական հրեա» վեպի առաջին հատորի իր «Հառաջաբան «Թափառական հրեայի» առաջաբանում գրում է, թե «հայերը մինչև այժմ աշխարհական դպրություն չեն ունեցել, լավ ու վատ եղել է և կա արեղայական դպրություն...»:

Գրականությունը, ասում է Նալբանդյանը, պետք է բխի ժողովրդի հոգուց, լինի նրա կյանքի և հոգու պատկերը: Այդպիսի՞ն են, արդյոք, ժամանակակից հայ գրականությունը, Մխիթարյանների գործերը և բազմաթիվ ուրիշ երկեր: Ո՛չ, այդ գրականությունը բաժանված է ժողովրդից, այսինքն՝ չունի ճշմարիտ գրականության բուն հատկանիշները. «Դա ազգի հոգու բխվածք չէ», - եզրակացնում է Նալբանդյանը:

Նալբանդյանն, ինչ խոսք, գնահատում է Մխիթարյանների գրական ու գիտական վաստակը: Ըստ Նալբանդյանի, Մխիթարյանները զբաղված էին գերազանցապես հայոց անցյալով, հին լեզվով, հին մատենագրությամբ: Նրանք տպագրել են 5-րդ դարի հեղինակների գործերը, ստեղծել քերականություն, բառաբաններ, թարգմանել ու տպագրել զանազան երկեր հին ու նոր եվրոպական լեզուներից, մեծապես ճոխացնելով և մշակելով հին հայկական դպրությունը: Բայց Նալբանդյանը գտնում է, որ հին հեղինակները լեզվի պատճառով չեն կարդացվում և այդ պատճառով էլ քիչ բան են տալիս մարդկանց: Այս ամենի մասին Նալբանդյանը գրում է «Մխիթար Սեբաստացին և Մխիթարյանք» հոդվածում, որ տպագրվել է 1858 թվականի «Հյուսիսսփայլ» ամսագրի մի քանի համարներում և, դժբախտաբար, մնացել է անավարտ: Նա համոզված է, որ Մխիթարյանների ժառանգությունն ուսումնական, այսինքն՝

¹ Նույն տեղում, էջ 77:

գրագետ հայերի համար էր և ոչ ամբողջ ազգի: Ահա թե ինչ է գրում այդ մասին. «Ապա թե ոչ, ամբողջ ազգի համար քառասուն Մխիթար և նույնքան Միաբանությունք չէին կարողանալու կենդանացնել մի մեռյալ լեզու, որ չէ ժամանակի պահանջ և ազգի կենդանության հոգեդեն ձև ու կերպարանք»¹:

Ավելացնենք նաև, որ 1854-1855 թվականներին Նալբանդյանը «Յաղագս հայկական մատենագրության ճառ» ծավալուն ուսումնասիրության մեջ դարձյալ անդրադարձել է հայ գրականությանը 5-րդ դարից սկսած մինչև իր օրերը: Այդ հոդվածում, որ երկար տարիներ անտիպ էր մնացել, Նալբանդյանը իր շատ համարձակ գնահատականներով հակադրվում է գոյություն ունեցող ավանդական կարծիքներին և նշում աշխարհաբար լեզվով գրականություն ստեղծելու անհրաժեշտությունը: Հետաքրքիր է, որ հետագայում Վահան Տերյանն էլ նման տրամադրություններ է արտահայտել: Հիշենք, 1914 թվականին գրած «Հայ գրականության գալիք օրը» հանրահայտ հոդվածը, ուր մեծ բանաստեղծը մի կողմից սիրով ու երկյուղածությամբ խոսում Աբովյանի, Թումանյանի, Իսահակյանի, Դուրյանի, Րաֆֆու, Սունդուկյանի և էլի շատերի մասին, բայց «ընդհանուր գնահատության» ժամանակ խորին ցավով նշում է, որ հայ գրականությունը ետ է մնում: Սրա պատճառը հետևյալ կերպ է բացատրում. այլ բան է գրողի, գործչի պատմական դերը, այլ՝ արդիականությանը բավարարող երկը, ժամանակակից հարցերով ապրող ընթերցողին բավարարելը: Տերյանն ասում է, թե ժամանակները փոխվում են, փոխվում է նաև ընթերցողի ճաշակը, ժամանակակից ընթերցողին այլևս չեն կարող բավարարել Սմբատ Շահագիզի «Լևոնի վիշտը» կամ Ռաֆայել Պատկանյանի ազգային և ռազմական երգերը: «Կամ կարո՞ղ են տարօրինակ ու հեռավոր չթվալ,- ասում է Տերյանը,- մեր օրերի ինտելիգենտ մարդուն Պոռոջանի պարզամիտ հյուսվածքները կամ Րաֆֆու նման թեկուզ հանճարեղ մարդու ստեղծագործությունը, երբ մեր օրերի այդ ինտելիգենտը ոչ միայն Պուշկինին և Դոստոևսկուն ավելի լավ ճանաչում, քան երեկվա սերունդը, այլ որն անցել է և նորագույն եվրոպական և մանավանդ ռուսական գրականության բովով»²:

Գուցե մի քիչ խիստ է ասված, բայց ամբողջության մեջ միանգամայն

¹ Նույն տեղում, էջ 271:

² Նույն տեղում, էջ 271:

իրավացի է: Տերյանը գնահատում է Շահագիզի ու Պատկանյանի գործերը, նրանց պատմական դերը, բայց նրանց նման գրելը համարում է անհանդուրժելի, որովհետև կյանքում խիստ արմատական նոր խնդիրներ էին առաջացել, որոնց պատասխանը չէր կարելի փնտրել նախորդ շրջանի պոեզիայի նույնիսկ լավագույն երկերում:

Միքայել Նալբանդյանը գրականագիտական հարցեր է արծարծել նաև 1859 թվականին «Հյուսիսափայլ» ամսագրում լույս տեսած «Մեռելահարցուկ» անավարտ վեպի ծանոթագրություններում: Այստեղ մեծ գրողը հատկապես հատուկ ուշադրություն է դարձնում Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի վրա: Նալբանդյանն իրավացիորեն գտնում է, որ «Այդ աշխատության մեջ մարմին է առել ազգի հոգին, ազգի ներկա վիճակը... Այստեղ, որպես մի կախարդական հայելու մեջ ցույց է տալիս բանաստեղծը հայոց ազգի ընտանեկան կյանքի անշուք ու անմխիթար պատկերները...»¹: Հայտնի է, որ այս վեպի վերնագիրը բազում տարակարծությունների տեղիք է տվել: Ասել են, թե Աբովյանը կրակված սրտով բարձրացնում է Հայաստանի քաջ զավակների կերպարները: Բայց ինչու՞ է նա իր վեպին տվել «Վերք Հայաստանի, ողբ հայրենասերի» անունը:

Գրականագետներից շատերը պաշտպանում են այն միտքը, թե Աբովյանը ողբում է պարսկական դաժան լծի տակ գտնվող հայ ժողովրդի տառապանքը: Իրոք, վեպում հեղինակը մեծ տաղանդով նկարագրում է հայ ժողովրդի ֆիզիկական և բարոյական տառապանքները: Բայց չէ՞ որ նույն «Վերքի» մեջ Աբովյանը միաժամանակ ցույց է տալիս այդ տառապանքների ավարտը, պարսկական լծի կործանումը: Ուրեմն ինչու՞ է վերնագրել «Վերք Հայաստանի»: Նալբանդյանը բացում է Աբովյանի ստեղծագործության գաղտնիքը. ո՞րն է Հայաստանի վերքը: Այն, որ քաջերի հերոսական ոգին դեռևս մասնավոր երևույթ է: Սա է ողբալին:

Ապա Նալբանդյանն ավելացնում է, թե Աղասու կերպարի միջոցով ցույց է տալիս, որ դեռ չի սառել հայկական արյունը Հայաստանի զավակների երակներում, և ցավ է հայտնում, որ «Աղասու ընկերների հոգին ընդհանրական չէ բոլոր ազգին, թե այս ջերմարյուն տղամարդիկը շրջապատված էին սառնարյուն մարդերից...»²: Որ այդ «կախարդական հայե-

¹ Նույն տեղում, էջ 271:

² Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու (վեց հատորով) հ. 1, Երևան, 1979, էջ 311:

լու մեջ» տեսնում ենք մեր խեղճ ազգի ծանր ու ողբերգական վիճակը:

Հետևաբար, ինչպես “Վերք Հայաստանի»-ի հերոսը, այնպես էլ ինքը՝ Աբովյանը, հրավեր է կարդում ողջ ազգին, ողջ ժողովրդին՝ արթնանալու դարավոր ննջից և պայքարելու հողի, հավատի և հայրենիքի համար, պահանջում է՝ առնականություն, ազգային ինքնասիրություն և հպարտություն: Այլ խոսքով ասած՝ նա դեմ է խեղճությանը և լավկանությանը, խնդիր է դնում այդ դրությունից դուրս գալու, այսինքն՝ գալիքի մասին խորհելու:

Բանն այն է, որ Աբովյանը ցարիզմի տիրապետությունը Հայաստանի համար վերջնական չի համարում այլ գտնում է, որ հայերը ռուսաց հզոր արծվի թևերի տակ “մի լավ կդինջանան» և այնուհետև կմտածեն իրենց պետականության վերականգման մասին:

Դեռ ավելին, Միքայել Նալբանդյանն այստեղ խոսում է նաև Փարիզի «Արևմուտք» թերթում իր գաղափարակից ընկերոջ՝ արևմտահայ նշանավոր հեղափոխական դեմոկրատ Ստեփան Ոսկանյանի՝ Խաչատուր Աբովյանի “Վերք Հայաստանի» վեպին նվիրված գրախոսական հոդվածին: Այստեղ բարձր գնահատելով Ոսկանյանի այդ հոդվածը, Նալբանդյանը միաժամանակ, մտերիմ ընկերոջ իրավունքով, չի համաձայնվում նրա մի երկու դիտողության հետ: Բանն այն է, որ հոդվածում Ստեփան Ոսկանյանը թյուրիմացաբար գրում է, թե «Անհնարին է այս գիրքը դատել եվրոպական կանոնով, վասնզի, ընչպես ըսինք, ռամիկներու համար, և ռամիկի ոճով գրված է այն և իբրև գրական շեմք մը չընծայվի մեր առջև»¹: Նալբանդյանը հակառակ Ստեփան Ոսկանյանի, գտնում է, որ “Բոլոր ազգի համար է գրված, այնտեղ կա ուսանելիք ոչ միայն շինականի համար, այլև քաղաքացու, այլև հայոց կիսատ թերատ ուսումնականների համար ևս»²: Նալբանդյանը, առարկելով Ստեփան Ոսկանյանին, միաժամանակ գտնում է, որ “Վերք Հայաստանի» վեպը միմիայն կարելի է գնահատել եվրոպական չափանիշներով: Ավելացնեն նաև, որ ինչպես սկզբում լուսավորիչ Նալբանդյանը, այնպես էլ հետագայում հեղափոխական Նալբանդյանը մեծ դեր է հատկացնում գեղարվեստական գրականությանը: Նա գտնում էր, որ գրականության միջոցով կարելի է ազդել ժողովրդի վրա, կրթել, լուսավորել նրան, տոգորել նորագույն գաղա-

¹ Նույն տեղում, էջ 311:

² Նույն տեղում, էջ 311:

փարներով: Երկու դեպքում էլ գրականությունը նրա համար մի զենք է, միջոց, որով անհրաժեշտ է արմատախիլ անել հինը և ժողովրդի գիտակցության մեջ արմատավորել նորը:

Հետևաբար, անհրաժեշտ էր գրականության միջոցով մատնացույց անել կյանքի արատներն ու հոռի կողմերը և հակակրանք առաջացնել այդ բացասական երևույթների նկատմամբ: Ասել է թե Նալբանդյանը շատ մեծ տեղ էր հատկացնում հասարակական կյանքում գրականության խաղացած դերին:

Նալբանդյանը «Մեռելահարցուկ» վեպի տողատակերում շատ ջերմ ու դրվատանքի խոսքեր է ասում նաև բանաստեղծ, արձակագիր և մանկավարժ Մեսրոպ Թաղիադյանի մասին: Դժբախտաբար, այստեղ նա խոսք է բացում հանրահայտ համազգային օրհներգի՝ «Տե՛ր, կեցո դու զՀայս» երգի առիթով՝ թյուրիմացաբար այդ երգը վերնագրելով Թաղիադյանին:

Բանասիրությունը վաղուց պարզել է, որ «Տե՛ր, կեցո դու զՀայս» երգի հեղինակը ոչ թե Թաղիադյանն է, այլ «Հայելի կալկաթյան» թերթի խմբագիր Հովհաննես Տեր-Հակոբյանը: Այս երգը առաջին անգամ տպագրվել է 1821 թվականին նույն թերթում, որտեղից և 1847-ին Մեսրոպ Թաղիադյանը արտատպել է իր խմբագրությամբ լույս տեսնող «Ազգասեր» թերթում՝ վերջում նշելով Հ. Կ., որ նշանակում է՝ արտատպված է «Հայելի Կալկաթյան» թերթից: Սակայն այս բանը չի նկատել Նալբանդյանը և նրան թվացել է, թե «Տե՛ր, կեցո դու զՀայս»-ը պատկանում է Թաղիադյանի գրչին: Բայց սա չի կարևորը: Կարևորը այն է, որ այս բանաստեղծությունը առիթ է հանդիսացել, որ Նալբանդյանը «հավիտենական հիշատակի» արժանի Մեսրոպ Թաղիադյանի մասին գրեր. «Խե՛ղճ Թաղիադյանց. խաղաղություն քո հոգուն, չարչարվեցար, չարչարվեցար ազգի լուսավորության համար, բայց չհաջողեցավ քեզ, որպես շատերին, տեսանել քո մարգարեական ազդու քարոզության պտղաբերությունը մեր ազգի մեջ»¹:

Ապա իբրև ջերմ սիրո ու համակրանքի արտահայտություն, «Մեռելահարցուկ» վեպի տողատակերում Նալբանդյանը գրեթե ամբողջությամբ բերում է «արժանահիշատակ Թաղիադյանցի մասին» 1858 թվականի Զմյուռնիայի «Արշալույս Արարատյան» թերթի թիվ 583-ում տպված

¹ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու (վեց հատորով) հ. 1, էջ 312:

Մեսրոպ Թաղիադյանի մտերիմ ընկեր ու բարեկամ Թադևոս Ավետու-մյանի ջերմ ու դրվատական հողվածը, որը գրվել է բանաստեղծի մահ-վան առիթով: Հողվածը ցնցող տպավորություն է թողնում Միքայել Նալ-բանդյանի վրա, և նա ծանոթագրության մեջ իր ջերմ ու անկեղծ շնորհա-կալությունն է հայտնում Թադևոս Ավետումյանին, որ նա այս հողվածով «կամեցել է պատվել մեր քանքարավոր հեղինակի հիշատակը»¹: Քանի որ Նալբանդյանը Ավետումյանի հասցեն չգիտեր, որ անձամբ իր շնոր-հակալությունը հայտներ նրան, ուստի խնդրում է «Արշալույս Արարա-տյան» թերթի խմբագրությանը, որ նրա միջնորդությամբ, այսինքն՝ օգ-նությամբ հայտնի: «Խորհուրդս այն է,- գրում է Նալբանդյանը,- որ հար-գելի պարոնը մխիթարվի, լսելով, որ յուր ողբացած Թաղիադյանցի հի-շատակը հարգելի է մեզ բոլորիս և թե նորա գեղեցիկ հողվածը զուր չէ գրված հայերի համար»²:

Նալբանդյանը չի մոռանում նաև իր շնորհակալությունը հայտնել թերթի խմբագրությանը, որ իր էջերում տեղ է տվել «մեզ այս, թեև տխուր, բայց սրտերիս խիստ մոտ ծանոթությունքը»³: Նալբանդյանը, խիստ մտահոգված լինելով Թաղիադյանի թողած անտիպ աշխատու-թյունների ճակատագրով, միաժամանակ թախանձագին խնդրում է Ջու-ղայի Սուրբ Ամենափրկիչ վանքի սրբազան առաջնորդին, որ հանձն առ-նի պահպանելու դրանք կորստից ու մոռացությունից:

«Մեռելահարցուկ» վեպի տողատակերից մեկում Նալբանդյանը դր-վատանքի խոսք է ասում նաև իր հայրենակից, բանաստեղծ Գամառ-Քարթիպայի (Ռաֆայել Պատկանյան) 1856 թվականին Պետերբուրգում տպագրված «Ազգային երգարան հայոց» ժողովածուի մասին և այն հա-մարում է «մի օրինավոր հայոց երգարան»:

Դեռ ավելին, Նալբանդյանը 1858 թվականին «Հյուսիսափայլ» ամ-սագրում (թիվ 5) հանդես է գալիս «Կրիտիկա ժողովրդական լեզվով թարգմանված և տպված Ռոբինզոնի պատմությունը» խորագրով հողվա-ծով, ուր դրվատանքի խոսք է ասում Դանիել Դեֆոյի հանրահայտ «Ռո-բինզոն Կրուզոն» վեպի Գամառ Քարթիպայի թարգմանության մասին: Նալբանդյանին, ինչ խոսք, հայտնի էր 1818 թվականին Վենետիկում

¹ Նույն տեղում, էջ 312:

² Նույն տեղում, էջ 301:

³ Նույն տեղում, էջ 301:

տպագրված «պարոն Բժշկյանի» նույն գրքի թարգմանությունը, և չի վարանում առաջնությունը տալ Ռաֆայել Պատկանյանի թարգմանությանը, մանավանդ վերջինս լեզվի շնորհիվ: Նալբանդյանը խոստովանում է, որ այդ վեպի ընթերցումը հրճվանք է պատճառել իրեն և նրա աշխարհ գալը «ևս բարի խորհուրդ ուներ մեր ազգի համար»: Եվ Նալբանդյանը «հոգով և սրտով» խորհուրդ է տալիս ծնողներին, որ «փոխանակ մի խաղալի բան պարզևելու յուր զավակին, Ռոբինզոնի պատմությունը մի ընծա էր նորան...»¹:

Նալբանդյանը «Գամառ-Քաթիպայի տետրակները», որոնց ճակատը զարդարում է ռուս մեծ գրող Կարամզինի հանրահայտ խոսքը՝ «Գրե՛ այնպես, ինչպես որ խոսում են և խոսե՛ այնպես, ինչպես որ գրում են», համեմատելով «Ռոբինզոն Կրուզոն»-ի ներկա թարգմանության հետ, գտնում է, որ «տետրակների մեջ մենք ամենայն քայլափոխում տեսնում ենք, որ պ. Գամառ- Քաթիպան ուշադիր չէ լեզվի մաքրությանը, այլ շատ անգամ թույլ տալով օտարի խոսքեր կամ տեղական մասնիկներ, որոնցից կարելի է փախչել առանց լեզվի ժողովրդականությունը կորուսանելու, աղճատում է լեզվի անարատությունը...»²:

Նալբանդյանը ցավով նկատում է, որ Կարամազինից բերած բնաբանը չի դառնում Պատկանյանի աշխատությունների համար իբրև ընդհանուր ուղղություն և իբրև նմուշ մատնացույց է անում նրա «Նոր այբբենարանը», որը գրված է այնպիսի լեզվով, որով չի խոսում ժողովուրդը: Հոգվածագիրը միաժամանակ խոստովանում է, որ այս թարգմանության մեջ «հեղինակը փոքր ի շատե ուշը դարձուցել է լեզվի վրա...», թեև այստեղ է թույլ տվել լեզվական մեղանչումներ:

Ավարտելով իր խոսքը՝ Նալբանդյանը անկեղծորեն շնորհակալություն է հայտնում Գամառ- Քաթիպային և միաժամանակ հույս հայտնում իր կողմից նշված դիտողությունները կօգնեն հեղինակին՝ նրա հետագա աշխատանքներում:

Հետաքրքիր է, որ Նալբանդյանը «Մեռելահարցուկ» վեպի մի այլ տողատակում կրկին անդրադառնալով Մեսրոպ Թաղիադյանին, տարակուսանքով գրում է. «Ես մինչև այժմ չեմ հասկանում, թե ինչ խորհրդով գործածական լեզու շինեց յուր մատենագրության հանդիսում հին և մեռած

¹ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու (վեց հատորով) հ. 2, էջ 284-285:

² Նույն տեղում, էջ 285:

լեզուն: Ազգասեր օրագիրը ևս հրապարակվում է այդ լեզվով: Դժվար է հասկանալ այսպիսի անբնական գործը, մանավանդ Թաղիադյանցի կողմից, որ եվրոպական կրթություն ստացած լինելով և այն մի գործական ազգից, ինչպես անգլիացիք են, չէ մտածել, թե խոսելու կամ գրելու խորհուրդը այն է, որ ժողովուրդը կարդա և բան հասկանա: Ինձ շատ ծանր է թվել Թաղիադյանցի այն հայերի կարգում, որ մտածում էին մենայլը գործիք շինել, ժողովրդի մեջ կյանք ներս բերելու համար»¹:

Հասկանալի է աշխարհաբար լեզվի նախանձախնդիր Նալբանդյանի տարակուսանքը, որ Թաղիադյանի պես լուսավոր մի մարդ փոխանակ իր գրական (և ոչ միայն) երկերի և իր խմբագրությամբ լույս տեսնող «Ազգասեր» թերթի համար ընտրելու, ինչպես Աբովյանը կասեր՝ «հարիր հազարին» հասկանալի աշխարհաբար լեզուն, ընտրել է «հին և մեռած լեզուն»՝ գրաբարը: Նալբանդյանի համար շատ ցավալի է, որ Թաղիադյանի անունը տեսնի գրաբարի կողմնակիցների շարքում:

Իր գրական հարուստ ժառանգությամբ Միքայել Նալբանդյանը առանձնահատուկ տեղ է գրավում հայ գրականության ու մշակույթի պատմության մեջ: Լինելով անհանգիստ ու բուռն խառնվածքի տեր անձնավորություն՝ Նալբանդյանը մշտապես եղել է գրական – հասարակական կյանքի հորձանուտում:

Հիրավի, քիչ են այն գրողները, որոնք գրականության և գիտության տարբեր բնագավառներում միաժամանակ դրսևորում են բացառիկ տաղանդ ու վարպետություն: Այդ քչերից է Միքայել Նալբանդյանը:

Քանալի բառեր - *Գրաքննադատ, հրապարակախոս, կրիտիկա, «Հյուսիսափայլ», Կոմս էմմանուել, լուսավորյալ ազգ, քննադատական միտք, Միքայել Նալբանդյան, «Հիշատակարան»:*

ЛИТЕРАТУРНЫЕ ВЗГЛЯДЫ МИКАЕЛА НАЛБАНДЯНА

Генриетта Ованнисян

Ключевые слова - *Критик, публицист, критика, "Северное сияние", граф Эммануил, просвещенный народ, критическая мысль, Микаэл Налбандян, "Мемориал".*

¹ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու (վեց հատորով) հ. 1, էջ 305:

Микаэл Налбандян — многожанровый писатель. он выступал как поэт и прозаик, лингвист и критик, экономист и философ и оратор, а также очень искусный и богатый литературовед, везде проявлявший большой талант и мастерство. Свои критические взгляды Микаэл Налбандян выразил особенно в "Критике "Истории новоармянского языка", "Критике "Соса и Вардitera", "Мхитар Себасцин и Мхитарянк", "Предисловии" к "Блуждающему еврею". сноски к "Мемориалу графа Эммануэля", неоконченному роману "Мерельхарцук" и др. Он считает, что в народе распространено заблуждение, что критика — это плохо или что она смущает человека. Эти ложные слухи распространяют среди народа ученые-схоласты, оторванные от народа, и Налбандян пытается внести ясность в трактовку этого вопроса и с самого начала поставить критику на научную основу. Налбандян справедливо считает, что критика может быть специфична только для высокоразвитой нации, но ее основой является литература, и ее роль заключается в раскрытии духа этой литературы. Будучи человеком неугомонного и буйного темперамента, Налбандян всегда находился в водовороте литературной и общественной жизни. Действительно, мало писателей, которые одновременно проявляют незаурядный талант и мастерство в разных областях литературы и науки. Микаэл Налбандян – один из таких немногих.

THE LITERARY VIEWS OF MIKAYEL NALBANDIAN

Henrietta Hovhannisyan

Key words - *Critic, publicist, criticism, "Northern Lights", Count Emmanuel, enlightened nation, critical thought, Mikael Nalbandyan, "Memorial".*

Mikael Nalbandian is a multi-genre writer. he acted as a poet and novelist, linguist and critic, economist and philosopher and public speaker, as well as a very skilled and rich literary scholar, showing great talent and mastery everywhere. Mikael Nalbandian expressed his critical views especially in "Criticism of "History of New Armenian Language", "Criticism of "Sos and Varditer", "Mkhitar Sebastsin and Mkhitaryank", "Foreword" to "The Wandering Jew". in the articles, in the footnotes of "Count Emmanuel's "Memorial", "Merelhartuk" unfinished novel and elsewhere. He believes that there is a widespread misconception among the people that criticism is a bad thing or that it embarrasses a person. These false rumors are spread among the people by scholastic scientists who are disconnected from the people and Nalbandian tries to bring clarity to the interpretation of this issue and to put the criticism on a scientific basis from the very beginning. Nalbandian rightly believes

that criticism can only be specific to a highly developed nation, but its basis is literature, and its role is to reveal the spirit of that literature. Being a person with a restless and violent temperament, Nalbandian was always in the vortex of literary and public life. Indeed, there are few writers who show exceptional talent and mastery in different fields of literature and science at the same time. Mikael Nalbandyan is one of those few.

Հենրիետա Հովհաննիսյան ՀՀ Կոտայքի մարզ, Զորավանի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ,
դպրոցի գործադիր տնօրեն, բանասեր, հասարակագետ

Henrieta Hovhannisyana RA Kotayk Marz, Zoravan Secondary School SNOC, executive
director of the school, philologist, social scientist h.hovhannisyana@mail.ru Հեռ.
098440922,093973797